

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Բնական գիտություններ №1 (30) 2017 Естественные науки

ՀՏԴ 581:574

ԱԶՍ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՖԼՈՐԻՍՏԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ  
*Ա. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ն. Ի. ՄԱՍՎԵԼՅԱՆ*

*Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,  
0010, Երևան, Տիգրան Մեծի 17,  
e.mail-armengasparyan1969@mail.ru*

*Հոդվածում ամփոփված են Ազատ գետի ավազանի հարուստ բուսականության տեսակային կազմի, ֆլորիստական բազմազանության և կենսաոռնությունների տնտեսական գնահատման ուղղությամբ բազմամյա գիտական ուսումնասիրությունների որոշ արդյունքներ: Դաշտային աշխատանքների ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրվել է բուսական ծածկույթի ստորուկտուրան, տեսակային կազմն ու ֆլորիստական բազմազանությունը և կատարվել է ըստ կիրառական նշանակության բուսականության կենսաոռնության ներուժի դասակարգում:*

*Բանալի բառեր-լեռնային էկոհամակարգեր, ֆլորիստական բազմազանություն, բուսահամակեցություններ, բնալանդաֆտային միջավայր, կենսաոռնություններ:*

*Ներկայացված է խմբագրություն 02.02.2017թ.*

Լեռնային անկայուն էկոհամակարգերի կենսաբանական բազմազանության պահպանման և կենսաոռնության ներուժի նպատակային օգտագործման խնդիրներն արդի հասարակության կարևոր հիմնահարցերից են, որոնց լուծումը պահանջում է տնտեսական գործունեության պլանավորման ռացիոնալ սկզբունքների մշակում ու դրանց վրա հիմնված բնօգտագործման էկոլոգիապես անվտանգ ձևերի կազմակերպում:

Մարդկային հասարակության կայուն զարգացումն անհնար է պատկերացնել բնալանդաֆտային միջավայրից դուրս, իսկ միջավայրաստեղծ հիմնական գործոններից մեկը լանդաֆտի կենսածին տարրերն են, մասնավորապես բուսականությունը կամ լանդաֆտի ֆլորիստական բազմազանությունը:

Ֆլորիստական բազմազանության գենետիկական և տեսակային մակարդակներն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն ունեն մարդկային հասարակության կյանքի ու կենսագործունեության վրա: Երկրագնդի լանդաֆտային թաղանթի տարածքային հորինվածքում առանձնանում են տարբեր էկոհամակարգեր, որոնք բնութագրվում են բուսականության տեսակային կազմի հարստությամբ և ֆլորիստական բազմազանությամբ: Այդ առումով, առանձնահատուկ են Հայաստանի Հանրապետության լեռնային էկոհամակարգերը, որոնց ֆլորիստական բազմազանության թե տեսակային, և թե գենետիկական մակարդակները ներկայացված են չափազանց հարուստ կազմով: Մակերևույթի բարդ երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆի ձևաբանությունն ու բարձրաչափական մակարդակների տարբերությունները, ջրակլիմայական, հողաաշխարհագրական և կենդանաաշխարհագրական տարրերի բազմազանությունը այն գլխավոր գործոններն են [1], որոնք պայմանավորել են հանրապետության տարածքում բուսականության վերընթաց գոտիական տիպերի բացառիկ բազմազանություն՝ ավազային անապատների, քարքարոտ կիսաանապատների,

ողողատաճահճային կենսաձևերից մինչև լեռնային տափաստանների, մեզոֆիլ անտառների, մերձալպյան ու ալպյան մարգագետինների բուսահամակեցությունները:

Հանրապետության բնապահպանության ոլորտի առաջնահերթ խնդիրը մեր երկրի ֆլորիստական այդ բազմազանության պահպանումն է, ինչը նաև ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և հանրապետության կողմից ստորագրված ու վավերացված «Կլիմայի գլոբալ փոփոխության մասին շրջանակային», «Կենսաբազմազանության պահպանման մասին» և «Անապատացման դեմ պայքարի մասին» բնապահպանական կոնվենցիաներով: Այդ կոնվենցիաների հիմնադրույթներն իրականացման շրջանակներում Հայաստանի հանրապետությունը լրջագույն պատասխանատվություն է կրում շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի ընդհանրապես, և ֆլորիստական բազմազանության պահպանման համար՝ մասնավորապես:

Բուսահամակեցությունների բազմազանությամբ և ինքնատիպ ֆլորայի տեսակային հարուստ կազմով մեր հանրապետության եզակի տարածաշրջաններից մեկը Ազատ գետի ավազանն է: Ազատ գետի ջրահավաք ավազանի ֆլորայի և բուսական ծածկույթի ուսումնասիրությունները կատարվել են ստացիոնար և երթուղային եղանակներով և ընդգրկել են գետի ավազանի հյուսիս արևելյան հատվածը (Երանոսի և Ողջաբերդի լեռնաշղթաների միջև ընկած տարածքը)՝ Ազատի ջրամբարից մինչև Աղջկա բերդ (Կալադիրի) կոչվող տեղամասը, իսկ Գառնի գյուղի հյուսիս արևելյան մասում՝ մինչև Ողջաբերդի լեռնաշղթայի հարավ արևելյան լանջերը (ծ.մ. 1100-1700մ): Ազատ և դրա վտակ Գեղարդ գետերի հովիտներում ուսումնասիրվել են Գողթ և Գեղարդ գյուղերի շրջակա տարածքները (Հավուց թառ, Սուրբ Ստեփանոս) [1]:

Ուսումնասիրված տարածքում (զբաղեցնում է շուրջ 480 քվմ) բացահայտվել է բարձրակարգ անոթավոր բույսերի 1075 տեսակ, որոնք պատկանում են 482 ցեղերի և 97 ընտանիքների: Դրանք կազմում են Հայաստանի ֆլորայի 28,3 %-ը [2]: Երթուղային ուսումնասիրությունները կատարվել են 2005-2015 թթ: Մանրակրկիտ կերպով կատարվել է բույսերի հավաք՝ դրանց տեսակային պատկանելիությունը որոշելու նպատակով: Բուսականության տեսակային կազմի որոշման, ըստ նշանակության դեղաբույսերի դասակարգման աշխատանքներում ելակետային ուղեցույց են ծառայել հիմնարար մի շարք աշխատություններ [3,4,5,6]:

Ազատի ավազանի բուսականության ֆլորիստական կազմի դաշտային ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրել, որ խոշոր կարգաբանական խմբերն ունեն հետևյալ պատկերը. երկշաքիլավորները (Dicotyledones) կազմում են ֆլորայի 83,5%-ը կամ 898 տեսակ, միաշաքիլավորները (Monocotyledones) համապատասխանաբար 16,1% կամ 173 տեսակ: Տեսակային ամենից հարուստ կազմ ունի բակլազգիների (Fabaceae) ընտանիքը, որն ընդգրկում է 110 տեսակ կամ գետավազանի ֆլորայի 10,2 %-ը: Այս ընտանիքին են պատկանում Ազատի ավազանին բնորոշ այնպիսի դոմինանտ բուսատեսակներ, ինչպիսիք են՝ գազը (Astragalus), ուղտափուշը (Alhagi), մատուտակը (Glycyrrhiza), երեքնուկը (Trifolium), իշառվույտը (Melilotus), կորնգանը (Onobrychis):

Բուսական ծածկույթում տեսակարար կշռով և զբաղեցրած արեալի մակերեսով երկրորդը աստղաձողկազգիների (Asteraceae) ընտանիքն է, որն ընդգրկում է 101 տեսակ կամ ֆլորայի 9,4 %-ը: Այդ ընտանիքի ներկայացուցիչներից Ազատի ավազանում տիրապետող տեսակներ են օշինդրը (Artemisia), հազարատերևուկը (Achillea), տերեփուկը (Centaurea), տատակափշերը (Carduus), ոգնագլխիկը (Echinops):

Երրորդը դաշտավուկազգիների (Poaceae) ընտանիքն է, որը քանակական կազմի առումով փոքր-ինչ զիջում է նախորդին (94 տեսակ կամ ֆլորայի 8,8 %-ը): Սրանք բավականին տարածված, գյուղատնտեսության համար չարիք հանդիսացող կոճղար-

մատավոր մոլախոտեր են՝ արվանտակ (*Cynodon*), ոզնախոտ (*Dactylis*), հողմախոտ (*Apera*), խրբուկ (*Avena*), եղեգ (*Phragmites*):

Դաշտավուկազգիներին հաջորդում են կաղամբազգիները (*Brassicaceae*), մեխակազգիները (*Caryophyllaceae*), խուլեղինջազգիները (*Lamiaceae*), վարդազգի-ները (*Rosaceae*), նեխուրազգիները (*Apiaceae*), խլածաղկազգիները (*Scrophulariaceae*) և գաղտրիկազգիները (*Boraginaceae*): Հիշատակված առաջատար ընտանիքները միասին ընդգրկում են 695 տեսակ կամ ֆլորայի 64,6 %-ը, իսկ մնացած 87 ընտանիքները՝ 380 տեսակ կամ ֆլորայի 35,4 %-ը:

Ազատի ավազանի բուսականության կենսատեսության ներուժն ըստ կիրառական նշանակության դասակարգվել է հետևյալ հիմնական խմբերում.

**1. Մանդային և համեմունքային բույսեր:** Բույսերի այս խումբը ընդգրկում է շուրջ 90 տեսակ կամ ուսումնասիրվող բնատարածքի ֆլորայի 8,4%-ը, որոնք օգտագործվում են ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված (եփված, տապակած, պահածոացված, չորացված) վիճակում: Առավել գործածական տեսակներն են սիբեխը (*Falcaria vulgaris*), դեղագործական և օղակաձև ճներեկները (*Asparagus officinalis*, *A. verticillatus*), մանդակը (*Chaerophyllum bulbosum*), թորթոջը (*Chamaenerium angustifolium*), թանի բանջարը (*Consolida divaricata*, *C. orientalis*), գանգուր, մանրատերև և թթվաշ ավելուկները (*Rumex Crispus*, *R. acetosella*, *R. acetosa*), խատուտիկը (*Taraxacum officinale*), արեղախոտը (*Stachys*), եղեսպակը (*Salvia*), դաշտային մանանեխը (*Sinapis arvensis*), սպանախը (*Spinacia tetrandra*), տատրակը (*Tussilago farfara*), կորթինը (*Satureja hortensis*), կապարը (*Capparis spinosa*), հովվամաղախը (*Capsella bursa-pastoris*), թելուկը (*Chenopodium album*, *C. foliosum*), բառեղը (*Convolvulus*), գազրուկը (*Daucus carota*), ջրկանեփը (*Datisca cannabina*), էրնջնակը (*Eryngium billardieri*), բաղախոտը (*Glyceria*), մատուտակը (*Glycyrrhiza glabra*), անթառամը (*Helichrysum armenium*), եզնարգելը (*Ononis arvensis*), անխոնը (*Pimpinella*), դանդուղը (*Portulaca oleracea*), ինչպես նաև բալդրդանը (*Heracleum*), փիփերթը (*Malva*), անանուխը (*Mentha*), տափուղուղը (*Lathyrus*), ուրցը (*Thymus*), ուրցադաղձը (*Ziziphora*), սինձը (*Tragopogon*), կոտեմը (*Lepidium*), եղինջը (*Urtica*), քուռուշան (*Vicia*), սխյը, սխտորը (*Allium cepa*, *A. porrum*, *A. sativum*) և բազմաթիվ այլ տեսակներ:

**Աղյուսակ 1. Ազատ գետի ավազանի ֆլորայի սանդային և համեմունքային բույսերի առաջատար ընտանիքներն ու ցեղերը**

№	Ընտանիքը	Տեսակների թիվը	Բաժինը (%)	Ցեղերի թիվը	Բաժինը (%)
1.	Աստղածաղկազգիներ ( <i>Asteraceae</i> )	20	22,2	18	24,0
2.	Նեխուրազգիներ ( <i>Apiaceae</i> )	17	18,9	14	18,7
3.	Խուլեղինջազգիներ ( <i>Lamiaceae</i> )	12	13,3	12	16,0
4.	Կաղամբազգիներ ( <i>Brassicaceae</i> )	10	11,1	9	12,0
5.	Բակլազգիներ ( <i>Fabaceae</i> )	7	7,8	6	8,0
6.	Թելուկազգիներ ( <i>Chenopodiaceae</i> )	6	6,7	3	4,0
7.	Հրանունկազգիներ ( <i>Ranunculaceae</i> )	5	5,5	4	5,3
8.	Վարդազգիներ ( <i>Rosaceae</i> )	3	3,3	3	4,0
	Ընդամենը	80	88,8	69	92,0
	Մնացած 89 ընտանիքները	10	11,2	6	8,0

**2. Դեղաբույսեր:** Դեղաբույսերի մեծ մասը գոյատևում է անադարտ լեռնային պայմաններում, ինչպիսին Ազատ գետի ավազանն է, որտեղ տալիս են շատ ավելի բարձր որակի հումք և օգտակար նյութեր: Ազատի ավազանում աճում են զրեթե այն բոլոր դեղաբույսերը, որոնք կարելի է օգտագործել ժամանակակից բուսաբուժության բնագավառում [6].

Ուսումնասիրված բնատարածքի դեղաբույսերի ֆլորիստական բազմազանությունը նույնպես նշանակալի է: Ազատ գետի ավազանի ֆլորայի շուրջ 150 տեսակներ (կամ 13,9%) համարվում են դեղաբույսեր, որոնց բուժիչ հատկությունների անդարադարձել են տարբեր հետազոտողներ: Օրինակ, Ամիրդովլաթ Ամասիացին իր «Անգիտաց անպետը» աշխատությունում հիշատակում է շուրջ 3500 բուժիչ բույսերի անուններ: Հնագույն ժամանակներից արևելքի և արևմուտքի մի շարք երկրներում մեծ համբավ են ձեռք բերել հատկապես հայկական լեռնաշխարհի դեղաբույսերը: Այսպես, օրինակ, հին աշխարհի գիտնական Դիոսկորիդոսը «Materia medica» աշխատության մեջ մատնանշում է մի շարք հայկական դեղաբույսերի, մասնավորապես մատուտակի, սրոհունդի, աստրագալների բուժիչ հատկությունները: Հայկական բնաշխարհի բուժիչ բույսերի մասին են հիշատակում նաև Հերոդոտոսը, Ստրաբոնը, Քսենոֆոնը, Խորենացին, Հերացին:

Ըստ նշանակության դեղաբույսերի խմբում առանձնացվել են.

- *Միրտ-անոթային համակարգի* հիվանդությունների բուժման համար՝ առյուծագի սովորական (Leonurus glaucescens), կատվախոտ դեղատու (Valeriana officinalis), ծիծեռնախոտ մեծ (Chelidonium majus), ձիաձետ դաշտային (Equisetum arvense), ճնեբեկ դեղատու (Asparagus officinalis), ծորենի սովորական (Berberis vulgaris), մատնոցուկ ժանգային (Digitalis ferruginea), սարի դամիչ (Ephedra procera), արևելյան և միավարսանդ սզնիներ (Crataegus orientalis, C.monogyna), զիվան հսկայական (Cephalaria gigantea), խուլ եղինջ սպիտակ (Lamium album), կաղնակ սովորական (Onopordum acanthium), եղերդակ սովորական (Cichorium inthybus), մատնունի ուղիղ (Potentilla recta), մատիտեղ (Polygonum), հազարատերևուկ (Achillea):
- *Աղեստամոքսային հիվանդությունների* բուժման համար՝ օշինդր դառը (Artemisio absinthium), ջղախոտ խոշոր (Plantago major), փիփերթ արհամարհված (Malva neglecta), ճնճղապաշար (Capsella bursa-pastoris), խատուտիկ դեղատու (Taraxacum officinalis), խնկածաղիկ սովորական (Origanum vulgare), արեղախոտ քիստաբաժակ (Stachys atherocalyx), մարեմխոտ քաղաքային (Geum urbanum), լերդախոտ ալեհեր (Teucrium polium), եղինջ երկտուն (Urtica dioica), մակարդախոտ իսկական (Galium verum), մատիտեղ ճնճղուկի (Polygonum aviculare), լոշտակ սպիտակ (Bryonia alba) (նկ. 39) , նվիկ արևելյան (Arum orientale), մատուտակ մերկ (Glycirriza glabra), դժնիկ լուծողական (Rhamnus cathartica), փրփրուկային և նրբատերև հազարատերևուկներ (Achillea filipendulina, A. tenuifolia), օճառախոտ դեղատու (Saponaria officinalis), չիչխան դժնիկանման (Hippophae rhamnoides), խոնդատ վրացական (Verbascum georgicum), անթառամ հայկական (Helichrysum armenium), կատվալեզու եռաբաժան (Bidens tripartita), դաղձ երկարատերև (Mentha longifolia):
- *Երիկամների և միզատար ուղիների* բուժման համար՝ իշառվույտ դեղատու (Melilatus officinalis), մակարդախոտ կաչուն (Galium aparine), տորոն ներկատու (Rubia tinctoria), գայլուկ սովորական (Humulus officinalis), տուղտ հայկական (Althaea armeniaca), հանդաղուղ մազածաղիկ (Globularia

trichosantha), կղմուխ հեղինեի (Inula helenium), տատրակ սովորական (Tussilago farfara), ուրց սողացող (Thymus serpyllum), գիհի երկարատերև (Juniperus oblonga), ձիաձետ դաշտային (Equisetum arvense):

- *Մաշկային վերքերի բուժման համար*՝ մատիտեղ թռչնոց (Polygonum aviculare), մեծ և նշտարատերև ջղատերև (Plantago major, P. lanceolata), եզնարգել դաշտային (Ononis arvensis), լոշտակ սպիտակ (Bryonia alba), փիփերթ արհամարված (Malva neglecta), իշաովույտ դեղատու (Melilotus officinalis), ծովաբողկ գյուղական (Armoracia rusticana), սպանդ սովորական (Peganum harmala), սրոհունդ խոցված (hypericum perforatum), արցեութոբիում գիհու (Arceuthobium oxycedri), իգաբոց ներկատու (Anthemis tinctoria), ոզնենի գնդազլխիկավոր (Echinops sphaerocephalus):
- *Շնչառական ուղիների բուժման համար*՝ խնկածաղիկ սովորական (Origanum vulgare), տատրակ սովորական (Tussilago farfara), եղինջ երկտուն (Urtica dioica), խոնդատ (Verbascum), խուլ եղինջ սպիտակ (Lamium album), օճառախոտ դեղատու (Saponaria officinalis), կղմուխ հեղինեի (Inula helenium), գիվան հսկայական (Cephalaria gigantea) ջրկանեփ (Datisca cannabina):
- *Խորխարեր դեղաբույսեր*՝ իշաովույտ դեղատու (Melilotus officinalis), ուրցադաղձ բարակ (Ziziphora Zenuior), երնջնակ դաշտային (Eryngium campestre), տուղտ հայկական (Althaca armeniaca), տատրակ սովորական (Tussilago farfara)(նկ. 37), ուրց Կոչիի (thymus Ketschyanus), փիփերթ արհամարիված (Malva neglecta):
- *Արյունահոսությունը դադարեցնող (կամ մակարդող) դեղաբույսեր*՝ մակարդախոտ իսկական (Galium verum), եղինջ երկտուն (Urtica dioica), հովվամաղախ սովորական (Capsella bursa-pastaris), ջղախոտ նշտարատերև (Plantago lanceolata), սրոհունդ խոցված (Hypericum perforatum), իգաբոց ներկատու (Anthemis tinctoria), ճանկխոտ (Ajuga chia ), հազարատերևուկ (Achillea), ավելուկ (Rumex):
- *Հակաբորբոքային հատկություններով օժտված են*՝ չիչխան դժնիկանման (Hippophae rhamnoides), ձիաձետ դաշտային (Equisetum arvense), փիփերթ արհամարիված (Malva neglecta), ջղախոտ նշտարատերև (Plantago lanceolata), հովվամաղախ սովորական (Capsella bursa-pastoris), խնկածաղիկ սովորական (Origanum vulgare), մակարդախոտ իսկական (Galium verum), գերիմաստի (Viburnum lantana), եղեսպակ եթովպիական (Salvia acthiopis):
- *Անքնությունը* տառապող հիվանդներին խորհուրդ է տրվում օգտագործել կատվախոտ դեղատու (Valeriana officinalis), օշինդր դառը (Artemisia absinthium), սրոհունդ խոցված (Hypericum perforatum), առյուծագի սովորական (Leonurus glaucescens), ուրց (Thymus), խոնդատ (Verbascum):

Ինչպես նկատում ենք, Ազատի ավազանի ֆլորայի կազմում շուրջ տասն առաջատար ընտանիքներին պատկանող դեղաբույսերն առանձնանում են տեսակային հարստությամբ, օգտագործման առումով մատչելի են ու արդյունավետ (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Ազատ գետի ավազանի ֆլորայի կազմում դեղաբույսերի քանակն ըստ առաջատար ընտանիքների**

	Ընտանիքներ	Տեսակների քանակը	Բաժինը (%)
1.	Աստղաձաղկազգիներ (Asteraceae)	20	13,3
2.	Խուլեղինջազգիներ (Lamiaceae)	16	10,7
3.	Վարդազգիներ (Rosaceae)	15	10,0
4.	Բակլազգիներ (Fabaceae)	10	6,7
5.	Կաղամբազգիներ (Brassicaceae)	8	5,3
6.	Նեխուրազգիներ (Apiaceae)	7	4,7
7.	Մեխակազգիներ (Caryophyllaceae)	5	3,3
8.	Խլածաղկազգիներ (Scrophulariaceae)	4	2,7
9.	Տորոնազգիներ (Rubiaceae)	3	2,0
10.	Ակքանազգիներ (Dipsacaceae)	3	2,0
	Ընդամենը	91	60,7
	Մնացած 87 ընտանիքները	59	39,3

**3. Վայրի պտղատուներ և հատապտուղներ:** Վայրի պտղատուներն ու հատապտուղները շուրջ 40 տեսակ են, որոնցից առավելապես արժեքավոր են՝ ընկուզենին (*Juglans regia*), փշատենին (*Elaeagnus*), չիչխանը (*Hippophae*), թթենին (*Morus*), ունաբին (*Ziziphus*), նշենին (*Amygdalus*), ծորենին (*Berberis*), բալենին (*Cerasus*), սզին (*Crataegus*), տանձենին (*Pyrus*) (նկ.40), խնձորենին (*Malus*), սալորենին (*Prunus*), հաղարջենին (*Ribes*), մասրենին (*Rosa*), մոռենին (*Rubus*), արոսենին (*Sorbus*):

**4. Կերային բույսեր:** Ազատի ավազանում կերային բույսերի տեսակների քանակը ավելի քան երկու հարյուր է: Առավել արժեքավոր են՝ եղջրառվույտը (*Lotus corniculatus*), գալյուկանման առվույտը (*Medicago lupulina*), դեղատու իշառվույտը (*Melilotus officinalis*), ասորոպատենյան և անդրկովկասյան կորնգանները (*Onobrychis atropatana*, *O. transcaucasica*), ալպյան, ալեհեր, մարգագետնային երեքնուկները (*Trifolium alpestre*, *T. canescens*, *T. pratense*), վայրի և կտրած վիկերը (*Vicia cracca*, *V. truncatula*), կանաչավուն, զինջարկագույն, պալարավոր տափուղոռները (*Lathyrus aphaca*, *L. miniatus*, *L. tuberosus*):

**5. Մեղրատու բույսեր:** Ուսումնասիրված բնատարածքում հայտնի է մեղրատու բույսերի շուրջ 50 տեսակ: Ծառատեսակներից շատ արժեքավոր են՝ թխկին (*Acer*), փշատենին (*Elaeagnus*), սպիտակ ակացիան (*Robinia pseudoacacia*), թթենին (*Morus*), բալենին (*Cerasus*), սզին (*Crataegus*), խնձորենին (*Malus*), սալորենին (*Prunus*), տանձենին (*Pyrus*), թեղին (*Ulmus*), թփատեսակներից՝ մասրենին (*Rosa*), մոռենին (*Rubus*), սապիրակը (*Spirca*), ծորենին (*Berberis*):

Մեղրատու խոտաբույսերից տարածված են շնախոտը (*Cynanchum acutum*), տերեփուկ սղմվածը (*Centaurea depressa*), իժախոտ սովորականը (*Echium vulgare*), սապնարմատ երկնագույնը (*Gypsophila bicolor*), ուղտափուշը (*Alhagi pseudoalhagi*), սիսեռի և մարգագետնային տափուղոռները (*Lathyrus cicera*, *L. pratense*), կորնգանը (*Onobrychis*), միջին, մարգագետնային երեքնուկները (*Trifolium medium*, *T. pratense*), խուլ եղինջը (*Lamium album*), դաղձը (*Mentha*), խնկածաղիկ սովորականը (*Origanum vulgare*), պատրինջ դեղատուն (*Melissa officinalis*), եղեսպուկ կաղնոտայինը (*Salvia nemorosa*), աբեղախոտը (*Stachys*), ուրցը (*Thymus*):

**6. Եթերայուղատու բույսեր:** Բույսերի այս խումբը ներառում է շուրջ չորս տասնյակ տեսակ, որոնցից առավել արժեքավոր են պիստակենի բթատերևը (*Pistacia mutica*), երնջնակ դաշտայինը (*Eryngium campestre*), բալդրդան թավոտը (*Heracleum pubescens*), դառնախոտ սողացողը (*Acroptilon repens*), դառն օշինդրը (*Artemisia absinthium*), դեղատու շնալեզուն (*Cynoglossum officinale*), հոտավետ թելուկը (*Chenopodium botrys*), երկարատև և բազմապտուղ գիհիները (*Juniperus oblonga*, *J. polycarpus*), մերկ մատուտակը (*Glycyrrhiza glabra*), դեղատու իշառվույտը (*Melilotus officinalis*), դեղատու պատրինջը (*Melissa officinalis*), կատվադաղձը (*Nepeta*), արեղախոտը (*Stachys*), ալեհեր լերդախոտը (*Teucrium polium*), Կոչիի ուրցը (*Thymus kotschyanus*), դեղատու կատվախոտը (*Valeriana officinalis*), դեղատու աղավնիձը (*Verbena officinalis*):

**7. Ներկատու բույսեր:** Ուսումնասիրված բնատարածքում հանդիպում են ներկատուների շուրջ եռեսուն հինգ տեսակ, որոնցից հատկապես գերակշռում են.

- Բույսեր, որոնցից ստացվում է դեղին գույն՝ անթեմ ներկատու (*Anthemis tinctoria*), կատվալեզու եռաբաժան (*Bidens tripartita*), դառնուկ խալիպաձև (*Xanthium strumarium*), ծորենի սովորական (*Berberis vulgaris*), ջրկանեփ կանեփային (*Datisca cannabina*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), իշակաթնուկ Սեգիերի (*Euphorbia seguieriana*), մատուտակ մերկ (*Glycyrrhiza glabra*), եզնարգել դաշտային (*Ononis arvensis*), երեքնուկ ալեհեր (*Trifolium canescens*), սրոհունդ սովորական (*Hypericum perforatum*), թթեն սալիտակ (*Morus alba*), արձձախոտ եվրոպական (*Plumbago europaea*), հափուկ դեղին (*Reseta lutea*), դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*), գերիմաստի (*Viburnum lantana*):
- Բույսեր, որոնցից ստացվում է կարմիր գույն՝ իծախոտ սովորական (*Echium vulgare*), թելուկ բազմատերև (*Chenopodium foliosum*), դժնիկ լուծողական (*Rhamnus Cathartica*), սզնի կեռառնակ (*Crataegus kyrtostyla*), մակարդախոտ իսկական (*Galum verum*):
- Բույսեր, որոնցից ստացվում է կապույտ գույն՝ ապուզան կանեփանման (*Eupatorium cannabinum*), կղմուխ մեծ (*Jnula helenium*), խարի արևելյան (*Alkanna orientalis*), քրոզոֆորա ներկակիր (*Chrozophora tinctoria*), մատիտեղ թռչնոց (*Polygonum aviculare*), ամբուկ արևելյան (*Consolida orientalis*):
- Բույսեր, որոնցից ստացվում է սև գույն՝ խնկածաղիկ սովորական (*Origanum vulgare*), հացենի պտղասուր (*Fraxinus excelsior*), դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*), արոսենի հունական (*Sorbus graeca*):
- Բույսեր, որոնցից ստացվում են դարչնագույն երանգ՝ մատուտիկ մերկ (*Glycyrrhizaglabra*), ընկուզենի արքայան (*Juglans regia*), կաքավկրկուտ դեղագործական (*Lithospermum officinale*):

**8. Վիտամիններով հարուստ տեսակներ:** Ուսումնասիրված բնատարածքում բույսերի այս խմբում առանձնանում են. գազար վայրի (*Daucus carota*), ծնեբեկ դեղատու (*Asparagus officinalis*), օշինդր սովորական (*Artemisia vulgaris*), տատրակ սովորական (*Tussilago farfara*), ծորենի սովորական (*Berberis vulgaris*), ծոսապաշար (*Capsella bursa-pastoris*), լոշտակ սալիտակ (*Bryonia alba*), երկարատերև և բազմապտուղ գիհիներ (*Juniperus oblonga*, *J. polycarpus*), իշառվույտ դեղատու (*Melilotus officinalis*), սրոհունդ սովորական (*Hypericum perforatum*), դաղձ երկարատերև (*Mentha langifolia*), ծիծեռնախոտ մեծ (*Chelidonium majus*), դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*), կեռասենի ալեհեր (*Cerasus incana*), մասրենի (*Rosa*), եղինջ երկտուն (*Urtica dioica*) և այլն:

**9. Դաբադանյութերով հարուստ բույսեր:** Ուսումնասիրված բնատարածքում բույսերի այս խմբում առանձնանում են. օշինդր դառը (*Artemisia absintium*), երկարատերև

և բազմապտուղ գիհիներ (Juniperus oblonga, J. polycarpus), չիչխան դժնիկանման (Hippophae rhamnoides), սրոհունդ խոցված (Hypericum perforatum), ընկուզենի արքայական (Juglans regia), արենախոտ ուռատերև (Lythrum salicaria), նեղտերևի նեղատերև (Chamenarion angustifolium), արձձախոտ եվրոպական (Plumbago europaea), գանգուր և բթատերև ավելուկներ (Rumex crispus, R. obtusifolius), երեսնակ սովորական (Agrimonia eupatoria), զկեռ սովորական (Mespilus germanica), փռշնի մերկատերև (Celtis glabrata):

**10. Խեժատու բույսերի խմբում ներառել ենք.** պիստակենի բթատերև (Pistacia mutica), պրանգոս (Prangos), շնալեզու դեղատու (Cynoglossum officinale), գայլուկ սովորական (Humulus lupulus), գազ (Astragalus), երկարատերև և բազմապտուղ գիհիները (Juniperus oblonga, J. polycarpus):

Կարող ենք եզրակացնել, որ Ազատ գետի ավազանի բնական ֆլորան ու բուսականությունը շատ հարուստ է, ունի կենսառեսուրսային բավականին մեծ ներուժ և հանդիսանում է սննդի, անասնակերի, դեղագործական նյութերի, ներկանյութերի, եթերայուղերի, վիտամինների, համեմունքների ստացման աղբյուր: Սակայն, պետք է նշել, որ հանրապետության բուսական ծածկույթի այս հատվածի պահպանության վիճակը խիստ մտահոգիչ է: Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների քանակը Հայաստանում կազմում է 452 տեսակ [7]: Համեմատության համար նշենք, որ միայն Արարատի մարզում հազվագյուտ և անհետացող բուսատեսակների քանակը հասնում է 137-ի, դրանցում կան մարդու համար կարևոր աբորիգեն բուսատեսակներ՝ վայրի ցորեն, գարի, աշոր, վուշ, վարսակ, սոխ և այլն: Ազատի ավազանի բուսական աշխարհի կորուստները չեն սահմանափակվում միայն առանձին կարգաբանական խմբերով: Չանգվածային բնույթ են կրում նաև գենոֆոնդի և բուսական համակեցությունների (ասոցիացիաների և ֆորմացիաների) ոչնչացումը:

Կարծում ենք, որ տարածաշրջանի բուսականության կենսառեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրների լուծումը ենթադրում է բնօգտագործման ձևերի և բնապահպանական միջոցառումների այնպիսի տարբերակների մշակում, որոնք կապահովեն բնատեխնածին գեոհամակարգերի ներդաշնակ տարածքային հարաբերակցություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սամվելյան Ն. Ի. Գասպարյան Ա. Ս. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, Բնական գիտություններ, Երևան, 2015, N 2-3, (24-25), էջ 132-146,
2. Գասպարյան Ա. Ս. Բարսեղյան Մ. Ա. Ազատի կիրճի բուսաշխարհը և նրա պահպանությունը, << Բնապահպանության հարցեր >>, ՀՀ ԳԱԱ գիտաժողովի թեզեր, Երևան, 1998թ, էջ 12-13,
3. Тахтаджян А. Л. Федоров А. А. Флора Еревана, Л. 1972, 313 с.
4. Тахтаджян А. Л. Флора Армении, тт. 1-8, Ереван, 9-10, Чехия, 1952-2001.
5. Золотницкая С.Я. Лекарственные ресурсы флоры Армении // т1, Ереван 1958.
6. Золотницкая С.Я. Лекарственные ресурсы флоры Армении // т2, Ереван, 1965.
7. Հայաստանի «Կարմիր գիրք», Բույսեր, Երևան, 2010:



**РЕЗЮМЕ**  
**ФЛОРИСТИЧЕСКОЕ РАЗНООБРАЗИЕ И КЛАССИФИКАЦИЯ БИОРЕСУРСОВ**  
**РАСТИТЕЛЬНОСТИ БАСЕЙНА РЕКИ АЗАТ**  
*А. С. ГАСПАРЯН, Н. И. САМВЕЛЯН*

Выявление и классификация биоресурсного потенциала растительности имеет большое научно-практическое значение при разработке и осуществлении мероприятий по рациональному использованию и охране флористического разнообразия.

В статье обобщены некоторые результаты многолетних полевых исследований видовой структуры, флористического разнообразия, экономической оценки и классификации биоресурсов растительности бассейна реки Азат.

**SUMMARY**  
**FLORISTIC DIVERSITY OF AZAT RIVER'S BASIN AND ECONOMIC CLASSIFICATION OF**  
**THE VEGETATIONAL POTENTIAL**  
*A. S. GASPATYAN, N. I. SAMVELYAN*

Discovery and classification of vegetation's potential has a great scientific and practical value in using and keeping rationally the floristic diversity. The article summarizes the results of floristic studies carried out by the authors in the basin of the river Azat. They did analysis of floristic diversity and classification of vegetation, according to its practical utility.